ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Եղեգնաձոր

N 39 **<<04>> մայիսի 2015թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹԱՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 27-Ա որոշման պահանջներով

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գողթանիկի գյուղական համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները նշանակել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 27-Ա որոշմամբ սահմանված 2015 թվականի սեպտեմբերի 13-ի կիրակի օրը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2.Առաջարկել մարզի նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին՝ լիազորությունները ստանձնել սույն որոշման հավելվածում սահմանված ժամկետներում :

3.Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությանը ընտրությունից հետո ընդունված որոշման մասին ծանուցել համայնքի նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության վրա :

5.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2015 թվականի մայիսի 4-ի թիվ 39 որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզի Գողթանիկի գյուղական համայնքում 2015 թվականի սեպտեմբերի 13-ին տեղական ինքնակառավարման մարմինների կայանալիք ընտրությունների վերաբերյալ

հհ	Համայնքի անվանումը	Ընտրողների թիվը	ՏԻՄ-երի լիազորությունների ստանձման ժամկետները	
			Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
1	**Գողթանիկ**	156	10.10.2015թ.	Ընտրություն չկա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ